ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"_3" մարտի 2011թ. № 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» (ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ «ԱՐԾՎԱՆԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ») ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ Ա.ԳԱԼՍՏՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.5 կետի դրույթներով , **կ ա ր գ ա դ ր ում եմ**

1.2011 թվականի մարտի 3-ից լուծել «Կապանի բժշկական կենտրոն» (համատեղության կարգով «Արծվանիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն») փակ բաժնետիրական ընկերությունների վերստուգող Անուշ Գալստյանի հետ 2008թվականի մարտի 3-ին կնքված աշխատանքային պայմանագիրը՝ դրա գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ:

Հիմք՝ 2008թվականի մարտի 3-ին կնքված N13 աշխատանքային պայմանագիրը, 2011 թ. փետրվարի 23-ի ծանուցումը:

2 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ա. Գալստյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2011թ. մարտի 3
ք. Կապան